

ստորագրութեամբ յիշեալ յօդուածին վերաբերեալ մի պատասխան տպուեց, իքըև քննադատութիւն պը. Ն. Գագէեվի կարծիքների:

Խմբագրութեան ստացած այս արտատպութիւնը նույիրուած
է նոյն հարցին, Պր. Ս. բոլոր հիմնական կէտերում համա-
կարծիք է Ն. Փագէվիլին. այս լինքն՝ XI-րդ հատորի 1 մասի
յօդուածների մեկնութեան համար անհրաժեշտ է համարում ու-
շագրութեան առնել նաև «Հայաստանեայց եկեղեցու կանոնա-
կան իրաւունքի ընդհանուր ոգին և միտքը», իսկ ամուսնական
գործերը համարում է «զուտ հոգեոր»՝ ուրեմն և ենթակայ Ամեն-
նայն Հայոց կաթողիկոսի իրաւասութեանը: Պր. Ս. մեկնում
է նաև Պոլոտենիայի մի քանի ուրեմն յօդուածներ (1143, 1132),
փորձելով արտցուցանել, որ Սինոդը ամուսնական հարցերում
խորհրդատու ձայն ունի, իսկ Կաթողիկոսը՝ վճռողական:

Աւրեմն ամուսնական իրաւունքի այս խնդրի վերաբերմամբ
Առողջապահության հրատարակուող մասնագիտական իրաւագանա-
կան ախալթերթերը միեւնույն կարծիքն են յայանում։

S. U.

П.С.В.З.О.Н.Н.И.Р. - 9.0.9.1.0.

1. Բ. Խալաթեանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ՝ առաջաջաբան (էջ 3—23), ը. Նիւթ (էջ 24—79); Հրատարակութիւն «Բանասէր»-ի, Պարփս 1901, 80 (գինն է 50 կ.);
 2. Արտէն, Թող շմէզադքեն. Բարիդ, 1902, 160, էջ 32 (գինն է 50 սանթիմ.):

Մայր Արքունի Տպարանից սահցուած գրեթե.

3. Մարիա Կոբելի, Մի մանկան հոգու պատմութիւն, վէպիկ ոչ մանուկնեցի համար. Ուսւերէնից թարգմանեց Տ. Ա., Վաղարշապատ, 1902, էջ 3—354 (գինն է 1 ըուբի):
 4. Մ. Արեգեան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ: Արտատպած «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ 1901, էջ 3—602, 80 (գինն է 1 ը. 50 կ.):
 5. Հրաչեայ Յ. Աճառեան, Աւումնասիրութիւններ հայկական քարբառախօսութեան, Գ. Քննութիւն Վարարդի քարբառին: Արտատպած 1899թ. «Արարատ»-էն, Վաղարշա-

- պատ 1901, էջ ա—գ, 1—198 (գինն է 3 ֆը.=1 ռուբ.):
Ստանալու համար դիմել հեղինակին, Էջմիածին:
6. Մ. Ե. Բարխուդարեանց, Մատչելի քարոզներ, Բ. տետրակ.
Վաղարշապատ 1901, էջ 3—100 (գինն է 30 կոսէկ):
7. Ս. Հայկունի, Բարսկ Շահ և Անուշ Շահ, Մոկաց բար-
բառով ժողովրդական վէպ: Վաղարշապատ 1901 (գինն է
10 կոսէ):
8. Արտէն քահանայ Տէր-Յովակիմեան Բագրատունի, Հոգեոր
ընթրիք քրիստոնեայ ընտանիքների համար: Հրամ. Մուշեղ
Տէր-Արտէնեան Բագրատունւոյ. Վաղարշապատ, 1901, 8⁰
էջ ե—թ, 1—136 (գինն է 40 կոսէ):



Մ Ա Հ Ա Ց Ա Կ

† Պ Գ Ի Ւ Տ Կ Ա Ր Ի Է Ր

Յունուարի 14/27-ի: Պարիզում վախճանուեց 0դիւստ Կա-
րեկը՝ Արևելեան Կենդանի Լեզուների բարձրագոյն վարժարանի
հայ լեզուի ուսուցչապետը՝ 64 տարեկան հասակում: Հանդու-
ցեալը բաւական մեծ համբաւ ստացաւ իրեւ հայագէտ Մովսէս
Խորենացու մասին արած ուսումնասիրութիւններովը, որոնք
ծանօթ են և հայ ընթերցողներին: Խորենացու պատմութիւնը
անվաւերագիր համարող բանասէրներից ամենից ժողովրդականն
էր, այնպէս որ նրա անունով մինչև անդամ «Կարիէրեան» էին
կոչւում ընթացիկ գրականութեան մէջ—հարկաւ ոչ ըոլորովին
ձշտօրէն—ըոլոց՝ Խորենացու վաւերականութեան դէմ գրող-
ները: Կարիէրի առաջ ըերած փաստերը ընդդէմ Խորենացու
մեծ մասամբ արգէն հերքուած են և եթէ և—ցու պատմու-
թեան գրութեան ժամանակը իջնելու է հինգերորդից եօթներորդ
դար՝ այդ անշուշտ ոչ Կարիէրի ապացոյցների հիման վրայ:
Կարիէրի անունը դեռ աւելի էլ ժողովրդական դարձաւ հայ
ընթերցող մեծ—հասարակութեան մէջ Մարաքասի ընազըլ դիւ-
տի համբաւովը: Բայց Կարիէրի այդ նորագիւտ Մարաքասի մա-
սին գրելու խոսանումը մնաց անկատար: Լուրերին նայելով Կա-
րիէրի տեղը կըսնէ: իրեւ ուսուցչապետ Արել, Կենդանի Լեզուների